Արձանագրություն N 4
ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/016 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «14» Մայիսի 2021թ.
ժ. 11:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գալուստ Գալստյանը,
Անդամներ՝ Զավեն Աղաջանյանը և Անդրանիկ Տոներյանը.
Քարտուղար՝ Արթուր Բաղալյանը:

I. ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/016 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի մասին

Ընդունել ի գիտություն, որ սույն թվականի մայիսի 12-ին «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ին առաջարկվել էր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ն շտկել է անհամապատասխանությունները, սակայն վերջինիս ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1"1) հայտնաբերվել են հետևյալ անհամապատասխանությունները, մասնավորապես.

1. Հրավերով պահանջվող 2 հատ կոմպոզիտային սերվերային համակարգերը ներկայացված առաջարկում բացակայում են,
2. Հրավերով պահանջվող 2 հատ տվյալների պահպանման համակարգերը ներկայացված առաջարկում բացակայում են:
3. «1» և «2» կետերում բացակայող սարքավորումների փոխարեն առաջարկվել է 2 ական միասնական լուծում (server/storage)-ը, որը չի բավարարում հրավերի տեխնիկական բնութագրին, միասնական լուծման ժամանակ հնարավոր չէ առանձնացնել սերվերները տվյալների պահոցից, որը անհրաժեշտությունն է պատվիրատուի համար,
4. Հրավերի տեխնիկական բնութագրի 1.2 կետով պահանջվող Brocade Fiber Channel մոդուլները առաջարկում բացակայում են,
5. Հրավերով պահանջվող 6 հատ 2650W էլեկտրական սնուցման բլոկերի փոխարեն առաջարկվել է 8 հատ 2000W էլեկտրական սնուցման բլոկեր,
6. Հրավերով պահանջվող 16 հատ JD092B մոդուլների փոխարեն չի առաջարկվել կոնկրետ մոդելի ապրանք որպեսզի հնարավոր լինի ստուգել համատեղելիությունը արդեն իսկ առկա HP FlexFabric 5700 ցանցային կոմուտատորի հետ:
7. Հրավերով պահանջվող 6 հատ QSFP28 Uplink պորտերի փոխարեն՝ որոնցից ցանկացածը հնարավոր կլինի կոնֆիգուրացնել հետևյալ տարբերակներից յուրաքանչյուրով՝ 1x100Gb, 4x25Gb, 1x40Gb, 4x10Gb Ethernet, սակայն առաջարկվել է միայն 32x100G 1U AC port Side Intake and PSU Side Exhaust, որը չի համապատասխանում հրավերի պահանջներին,
8. Հրավերով պահանջվող 2 Ethernet պորտերով՝ յուրանչյուրը 25/50 Գբիթ/վրկ արագությամբ 1 կոնվերգենտ քարտի փոխարեն առաջարկվել է Mellanox ConnectX-4 Lx 10/25 GbE SFP28 2-port PCIe Ethernet Adapter, որը չի բավարարում հրավերի պահանջներին,
9. Հրավերով պահանջվում էր յուրաքանչյուր սերվերի վրա տեղադրել միանման 16 օպերատիվ հիշողության մոդուլ, որտեղ մոդուլների ընդհանուր քանակը լուծման մեջ կկազմի

առնվազն 24x16=384: Ներկայացված առաջարկում տեղադրված է ընդամենը 312 մոդուլ, ինչը չի բավարարում հրավերի պահանջներին, ինչպես նաև առաջարկվող 1 սերվերի համար օպերատիվ հիշողության մոդուլների քանակը առավելագունը 12 է 16-ի փոխարեն, ինչը պահանջվում է մրցույթի պայմաններով համակարգի հետագա աճեցման հնարավորությունն ապահովվելու համար,

10. Հրավերով պահանջվում էր յուրաքանչյուր սերվերի վրա տեղադրել երկուական 2.5" SSD տիպի կրիչ, որի փոխարեն առաջարկվել է M.2 տիպի SSD կրիչներ, որը 2.5" չէ և չի բավարարում հրավերի պահանջներին,

11. Հրավերով պահանջվում էր յուրաքանչյուր սերվերի վրա տեղադրել մեկական քարտ՝ 2 հատ 32Գբ/վ Fibre Channel պորտերով, ինչը ներկայացված առաջարկում առկա չէ,

12. Հրավերով պահանջվում էր տվյալների սինխրոն և ասինխրոն ռեպլիկացիա առկա HPE 3PAR 8400 համակարգի հետ՝ առանց լրացուցիչ միջանկյալ սարքերի և ծրագրային ապահովման կիրառման, սակայն նշվածի վերաբերյալ ոչ մի տեղեկություն կամ առաջարկ ներկայացված չէ,

13. Համաձայն Լենովո ընկերության կայքում տեղադրված տեղեկատվության՝ առաջարկվող Lenovo ThinkAgile HX3721 համակարգի համար հասանելի չեն 7.68TB և 15.36TB SSD կրիչներ, ինչը պահանջված է հրավերի տեխնիկական բնութագրով՝ ապահովելու համար համակարգի հետագա աճեցման հնարավորությունները:

II. Գնահատող հանձնաժողովի որոշման մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

ա) Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին որոշման 42-րդ կետը մերժել «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը,

բ) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը չկայացած հայտարարել ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/016 ծածկագրով ընթացակարգը:

Ընդունվել է որոշում.

Կողմ՝ 3, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Գ. Գալստյան

գնահատող անդամներ՝ _____ Զ. Աղաջանյան

_____ Ա. Տոներյան

քարտուղար՝ _____ Ա. Բաղալյան